# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

## ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

**07.01.2025թ.** **ք.Վանաձոր**

**Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը**
**Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը**

**Մասնակցում էին**
Գ.Ասրյանը - մարզպետի տեղակալ
Հ.Ավետիսյանը - մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Գ.Քարհանյանը - մարզպետի խորհրդական
Հ.Հակոբյանը - մարզպետի օգնական
Կ.Աշրաֆյանը - մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Վ.Ղարսայանը, Ա.Մատինյանը, Վ.Հովհաննիսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Թումանյանը, Ա.Հակոբյանը, Ա.Մալոյանը, Գ.Մելիքսեթյանը, Ա.Բեջանյանը - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

**Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝**

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

**Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝**

**1.** ՀՀ Լոռու մարզպետը շնորհավորեց մարզպետի աշխատակազմի աշխատակիցներին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, ցանկանալով, որ 2025 թվականը Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի համար լինի խաղաղության, բարօրության և նոր նպատակների իրականացման տարի: Մարզպետը նշեց, որ չնայած 2024թ-ը նշանավորվել է կատարված աշխատանքների արդյունավետությամբ, սեփական եկամուտների հավաքագրման մակարդակի աճով և որոշ բնագավառներում նշանակալի ձեռքբերումներով, բայց նաև եղել են բացթողումներ և թերացումներ, որոնք պետք է շտկվեն, և անհրաժեշտ է, որ 2025 թվականի համար նշածող սահմանվի առավել բարձր արդյունավետ աշխատանքը և նորանոր ձեռքբերումները ի փառս Հայաստանի Հանրապետության և Լոռու մարզի:

Լոռու մարզպետն իր նկատառումները հայտնեց մարզպետի տեղակալների, աշխատակազմի գլխավոր քարտուղարի և մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպման և գործունեության վերաբերյալ և տվեց մի շարք հանձնարարականներ:

Մարզպետը հանձնարարեց՝

**1.**Մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին և Հ.Ավետիսյանին՝

**1.1** Կազմել պլան-գրաֆիկներ և շաբաթը առնվազն 3 անգամ կազմակերպել հանդիպումներ ազգաբնակչության հետ մարզի համայնքներում, քաղաքներում, վարչական բնակավայրերում, թաղամաս առ թաղամաս տեղեկանալ առկա խնդիրներին,

հնարավորինս լուծումներ տալ բարձրացված հարցերին, ներկայացնել առաջարկություններ և ամենշաբաթյա գրավոր տեղեկատվություն:

**1.2** 2-օրյա ժամկետում ներկայացնել ամփոփ և ամբողջական տեղեկատվություն Աղետի գոտում իրականացված աշխատանքների ընթացքի, առաջացած խնդիրների և հետագա անելիքների վերաբերյալ, դրանց համար կազմել պլան-ժամանակացույցեր՝ կատարման կոնկրետ ժամկետներով, անհրաժեշտության դեպքում՝ նաև քննարկումներ կազմակերպել աշխատակազմի ստորաբաժանումների և այլ կառույցների հետ :

**2.** Մարզպետի տեղակալ Հ.Ավետիսյանին՝

**2.1** 7-օրյա ժամկետում ուսումնասիրել 2025թ. սուբվենցիոն ծրագրերի համայնքների կողմից ներկայացված փաթեթները ըստ առաջնահերթության և կարևորության, ինչպես նաև աշխատանքներ տանել համայնքների ղեկավարների հետ չներկայացված, կարևոր նշանակության ծրագրերի շուտափույթ ներկայացման և առաջացած խնդիրների լուծման առումով, հաշվի առնելով համայնքների առաջնահերթությունները:

**2.2** 1-շաբաթյա ժամկետում կատարել ուսումնասիրություններ և ներկայացնել տեղեկատվություն Լոռու մարզի բնակարանային խնդիրներ ունեցող ընտանիքների վերաբերյալ, դրանք տարանջատելով՝ ըստ հերթացուցակում գրանցվածների և այլ իրավիճակներով հերթացուցակներում հայտնվածների, ինչպես նաև առաջարկել բնակապահովման լուծման տարբերակներ:

**3.** Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյանին՝

Հետևողական աշխատանքներ իրականացնել աշխատակազմի և համայնքապետարանների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների անցկացման ուղղությամբ, հետևել, որպեսզի մրցույթների կազմակերպումն ու անցկացումը իրականացվի օրենսդրության պահանջներին համապատասխան, անաչառության ապահովման, դժգոհությունների բացառման, ձայնագրությունների պարտադիր առկայության, հարցաշարերի միատեսակ կիրառման պայմաններում, մրցույթների վերաբերյալ առնվազն մեկ օր առաջ ներկայացնել տեղեկատվություն մարզպետին, ինչպես նաև մրցույթների անցկացումից հետո արդյունքների վերաբերյալ ներկայացնել տեղեկատվություն:

**4.** Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Անհրաժեշտ ուշադրություն դարձնել տրված հանձնարարականների կատարմանը, բացառել ժամկետների ուշացումները, բացթողումները, հանձնարարականներով տրված հարցերին տալ ամբողջական և օբյեկտիվ լուծումներ:

**5.** Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանին, մարզպետի խորհրդական Գ.Քարհանյանին՝

Ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ մարզային ենթակայության դպրոցների հրատապ լուծումներ պահանջող խնդիրների վերաբերյալ:

**6.** Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանին՝

Կրկին անգամ ուսումնասիրել սեփական եկամուտների հավաքագրման աճը խոչընդոտող խնդիրները և ներկայացնել առաջարկություններ խնդիրների լուծման և հավաքագրման մակարդակի բարձրացման ուղղությամբ, միաժամանակ միջոցներ ձեռնարկել ապառքների մարման աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ:

**7.** Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ Ռ.Պողոսյանին՝

**7.1** Անհրաժեշտ ուշադրության կենտրոնում պահել ազգաբնակչության՝ սոցիալական խնդիրներ ունեցող անձանց առընչվող հարցերը, և տանել համապատասխան աշխատանքներ արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում ներգրավելով այլ կառույցների և կազմակերպությունների:

**7.2** Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել առաջարկություններ մարզի բժշկական կենտրոններում և առողջապահական կազմակերպություններում բժշկական ծառայությունների մատուցման, բնակչության սպասարկման որակը բարձրացնելու, դժգոհությունները և քաշքշուկները բացառելու նպատակով, ինչպես նաև աշխատանքներ իրականացնել, որպեսզի որևէ կազմակերպությունում առկա լավագույն փորձը և նորարարությունները, աշխատելաոճը փոխանցվեն և ներդրվեն մյուս կազմակերպություններում:

**8.**Մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Մատինյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել դպրոցներում տարվող կրթադաստիարակչական մակարդակի բարձրացման ուղղությամբ, դրսևորել անձնական նախաձեռնություն և ակտիվություն, նոր առաջարկություններով և համատեղ միջոցառումներ իրականացնելով, անհրաժեշտության դեպքում՝ այդ աշխատանքներում ներգրավել տարբեր գերատեսչությունների, հասարակական և այլ կազմակերպությունների:

**9.** Լոռու մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետի պարտականությունները կատարող Ա.Մալոյանին՝

Անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել մարզի զարգացման, ներդրումային ծրագրերի ներգրավման ուղղությամբ, այդ առումով համագործակցել տարբեր կազմակերպությունների հետ և 1-ամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն և զարգացման ու ներդրումային ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ:

**10.** Լոռու մարզպետի օգնական Հ.Հակոբյանին՝

Շարունակել անցկացնել հանդիպումները ԼՂ-ից տեղահահանված և մարզում բնակություն հաստատած քաղաքացիների հետ, ուսումնասիրել նրանց կողմից բարձրացված խնդիրները, աջակցել դրանց լուծմանը և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2025-01-08 18:28:55 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝** **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99